

ՀԱՅԱՍՏԱՅԻ ԼԵԶՎԻ ՀԻՆԱՆԱՏՈԼԻԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՎԱՐԿԱԾԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական աղբյուրները պատմում են Խալաša-Azzi երկրի մասին, որ դիմագրավել է խեթական պետությանը և պատերազմներ մղել նրա դեմ: Թե որքան կարևոր դեր է խաղացել Հայասան հին աշխարհի պատմության մեջ և որքան վտանգավոր եղել խեթական պետության համար, երևում է թեկուզ նրանից, որ հետազոտողները այդ պետության արևելյան և հարավ-արևմտյան հարաբերությունների շորս հիմնական ոլորտներից մեկը համարում են հայաստականը՝ դնելով այն խուռականի, ակկադականի և եգիպտականի կողքին¹:

Դեռևս 1920-ական թթ. հետազոտողները ուշադրություն են դարձնում Խալաša երկրի անվան և հայերի ինքնանվանման (Hay-k') նմանությանը: Հայասա երկրի աշխարհագրական դիրքի, քաղաքական պատմության և լեզվի մասին գրվում են ղանաղան ուսումնասիրություններ, որոնցից առանձնապես հիշատակելի են է. Ֆոռերի, է. Կավենյակի, Ն. Ադոնցի, Գ. Ղափանցյանի, Հ. Մանանդյանի, տողերիս գրողի և Ի. Մ. Դյակոնովի աշխատությունները²:

Հայասա երկրի տեղադրության և սահմանների մասին հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Վ. Խաչատրյանի «Խեթական պետության արևելյան շրջանները» աշխատությունը և ղանաղան հոդվածները³:

Մեզ հետաքրքրող հարցի՝ Հայասայի լեզվի և հայերենի փոխհարաբերության մասին գիտնականները հայտնել են երեք տարբեր կարծիքներ.

1) Ոչ միայն Հայասայի անունն է կապված հայերի անվան հետ, այլև հայասացիները հայերի անմիջական (ուղղակի) նախորդներն են, նրանց լեզուն՝ հայերենի հիմքը: Այս կարծիքը ամենից ավելի հստակ կերպով ձևակերպված է Գ. Ղափանցյանի կողմից: Սակայն երբ նկատի ենք առնում, որ Գ. Ղափանցյանը հայերենը համարում է խառնածին լեզու՝ հնդեվրոպական

¹ H. Kronasser, Vergleichende Laut- und Formenlehre des Hethitischen, Heidelberg, 1956, էջ 20:

² E. Forrer, *Hajasa-Azzi*, „Caucasica“, Leipzig, 1931; E. Cavaignac, *Subiliuma et son temps*, Paris, 1932; Ն. Ա. Դ. ի՝ Le premier royaume d'Arménie, „Revue hittite et asianique“, 17, 1934; N. Adontz, *Histoire d'Arménie*, Paris, 1946 (հայ. թարգմ. Ն. Ա. Դ. ունց, *Հայաստանի պատմություն, երևան, 1972*); Г. Капанцян, *Ханаса—колыбель армян*, Ереван, 1948; Я. А. Манандян, *Сообщения хеттских, ассирийских, урартских и древнеармянских источников о Хайаса-Аззи*, «О некоторых спорных проблемах истории древней Армении», Ереван, 1956; G. B. Jahukian, „The *Hajasa Language and its Relation to the Indo-European languages*“, „Archiv orientální“, XXIX, 3, 1961; Г. Б. Джаукян, *Хайасский язык и его отношение к индоевропейским языкам*, Ереван, 1964; И. М. Дьяконов, *Предыстория армянского народа*, Ереван, 1968:

³ В. Н. Хачатрян, *Восточные провинции Хеттской империи*, Ереван, 1971. Ն. Ա. Դ. ի՝ Хайасцы, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.)*, 1972, № 8, էջ 32—41; Ն. Ա. Դ. ի՝ Хайаса и Наирн, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.)*, 1973, № 11, էջ 37—47:

և ոչ հնդեվրոպական (այդ թվում՝ խուռա-ուրարտական) տարրերի խառնուրդով, և որ, սրա հետ կապված, նույնպիսի բնույթ է հաղորդում հայասերենին, ասլա նրա վարկածի արժեքը զգալիորեն պակասում է: Նշենք, որ հայ որոշ հետադոտողներ դեռևս շարունակում են պաշտպանել հայասերենի՝ հայերենի ուղղակի հիմք լինելու տեսակետը՝ առանց փաստական որևէ հիմնավորման: Մինչդեռ, եթե հայասերենը լինելու հայերենի ուղղակի հիմքը, ապա պահպանված հատուկ անունների՝ բուն հայասական մասը պետք է լիակրթի հնդեվրոպական վերականգնվող նախաձևերի և հայերենի միջև:

2) Հայասացի և հայերի անունների նմանությունը պատահական է, և Հայասան ոչ մի կապ չունի Հայաստանի ու հայերի հետ: Այս տեսակետը ամենից ավելի հստակորեն ձևակերպել է Ի. Մ. Գյակոնովը, որ Հ. Տաշյանի նման հալ անունը բխեցնում է խեթերի անունից (hati->հալ), իսկ Հայասացի լեզվին, բայց Գ. Ղափանցյանի բերած զուգահեռների, հատկացնում հիմնականում խուռական բնույթ՝ նշենք, որ վրացական որոշ հետադոտողներ կապ են տեսնում *Uai:ša-* և Կողքիսի հին անվան՝ *Ա:շ-ի* միջև, թեև այս տեսակետը չի հիմնավորվում այլ կարգի տվյալներով:

3) Հայասացի անունը կապված է հայերի անվան հետ, բայց հայասերենը հայերենի անմիջական հիմքը չէ, այլ հայերենից տարրեր հնդեվրոպական լեզու, որ հանդես է գալիս նրա մեջ որպես կողմնակի շերտ (ենթաշերտ, սուբստրատ): Այս տեսակետը հայտնել է տողերիս զրոզը՝ հենվելով հայասական անունների փոքրասիական և հատկապես խեթա-լուվական զուգահեռների վրա, որոնք թվով զերակշռում են Գ. Ղափանցյանի և ուրիշների բերած խուռական զուգահեռներին: Ըստ այս տեսակետի Հայասացի բուն լեզուն ցեղակից է խեթա-լուվական լեզուներին, իսկ հայերենը ձևավորվել է արմենների լեզվի հիմքի վրա՝ հայասացիների լեզվի ուժեղ ազդեցությամբ. սրանով էլ բացատրվում է հալ և աւսն անունների փոխհարաբերությունը:

Հայտնի է, որ Հայասացի լեզվի մասին զաղափար են տալիս միայն հատուկ անունները, որոնք երեք կարգի են՝ անձնանուններ, զիցանուններ և տեղանուններ: Խախտն զրաւնց հանգամանալից քննությունը, հարկ ենք համարում Հայասացի վերաբերյալ մեր նախորդ աշխատության համեմատություններ երեք վերապահություն անել:

1) Այստեղ քննարկումից հանվում են Իշուվայի ու այլ երկրների հատուկ անունները, և խոսվում է միայն Հայասա-Աղդիի հատուկ անունների մասին: Մա արվում է մի կողմից՝ քննության միասնությունը չխախտելու և տարամուտ տարրերը բացատրելու նպատակով, մյուս կողմից՝ Իշուվայի լեզվի վերաբերյալ մեր եզրակացությունների փոփոխության հետևանքով. եթե նախկինում մենք առանց բավարար քննադատության ընդունել էինք Գ. Ղափանցյանի կարծիքը Հայասացի և Իշուվայի բնակչության լեզվական բնդհանրության մասին, ապա այժմ հակված ենք կարծելու, որ Իշուվայի բնակչությունը

¹ Այս կարծիքն է հայտնել նաև Վ. Բրնցյանուն («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 105—106)՝ նշելով, որ հայասական անձնանունների և զիցանունների որոշ բաղադրիչներ հանդիպում են նաև նույնան ազգուսներում (հմմտ. P. M. Purves, Non-Semitic personal Names from Nuzi, Philadelphia, 1943): Իրականում նույնան տեքստերի Առո-, Muft-, -mu- տարրերը հինանատոլիական ծագում ունեն, -ni-, -li տարրերը ընդհանուր են հինանատոլիական և խուռական հատուկ անունների համար, որոշ կարգի նմանություններ էլ (հմմտ. նույն. Mar(r)- և հայաս. Marija-) հավանաբար պատահական բնույթ ունեն: Իզուր է, որ խեթերը խստորեն տարբերում էին հայասացիներին խուռիներից:

ներ եղել է խուռալեզու կամ խոսել է խուռերենին մոտ լեզվով, մինչդեռ, ինչպես կտեսնենք, Հայաստանի բնակչության լեզուն մոտ է եղել խեթա-լուվական լեզուներին: Այս կապակցությամբ հանված են Aiššila և Arīḫpizzi- անձնանունները, որոնցից առաջինը պատկանել է Հայաստանի Դուկկամային համանուն պախովական Դուզդամայից ծագող մի անձնավորության, երկրորդ՝ իշմերի-դացի մեկին: Հանված է նաև Gabildiš-ը, որի անձնանուն լինելը կասկած է հարուցում:

2) Մատնանշվում են միայն այն զուգահեռները, որոնց բնույթը զրեթե կասկած չի հարուցում, և որոնց ղեպքում գիտնականների եզրակացությունները հիմնականում միասնական են: Ավելի քիչ տեղ են զրավում համապատասխան զուգահեռներով չհիմնավորվող ստուգարանական մեկնությունները:

3) Նախորդ աշխատության լույս տեսնելուց հետո հանդես են եկել նոր ուսումնասիրություններ ու փաստեր, որոնք մասնակիորեն փոխել են հեղինակի տվյալները և եզրակացությունները: Այս բոլորն անհրաժեշտ են դարձնում վերստին անդրադառնալ Հայաստանի լեզվի հարցին, հաշվի առնել եղած քննադատական գիտողությունները⁵ և կատարել որոշ ձշտումներ: Դիտողությունները երկու կարգի են՝ ընդհանուր և մասնակի: Ընդհանուր բնույթի դիտողությունն այն է, որ հայաստանյան նյութն անբավարար է հիմնավոր եզրակացություններ անելու համար: Սրա հետ ընդհանրապես չի կարելի չհամաձայնել, բայց հարկավոր է նկատի առնել, որ նախ՝ երբեմն բավական ճիշտ եզրակացություններ են արվել նաև ավելի քիչ փաստերի հիման վրա և երկրորդ՝ այդ նույն հիմունքով պետք է ժխտվեն նաև Հայաստանի մյուս հետազոտողների եզրակացությունները: Մասնակի դիտողությունները վերաբերում են առանձին փաստերի և ստուգաբանությունների, որոնք մեր քննադատներին բավարար չափով հիմնավորված չեն թվում: Այս կապակցությամբ կարելի է ասել հետևյալը. նախ՝ մեր քննադատների բերած փաստերը քննության առնված հատուկ անունների ընդհանուր թվի համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում և քննադատության ճիշտ լինելու ղեպքում էլ ընդհանուր եզրակացություններ չեն խախտում (մանավանդ եթե նկատի առնենք մեր արած վերապահումը իշմերիական հատուկ անունների վերաբերյալ). երկրորդ՝ մեր բերած մի շարք ստուգաբանություններ առաջարկված են ուրիշների կողմից կամ հենվում են ուրիշների հայտնի եզրակացությունների վրա, սակայն մեր քննադատները, շառարկելով դրանց ղեմ առանձին վերցրած (համառ. Annišas, Muttiš, Terittituniš և այլն), առարկում են մեր աշխատության ղեմ, ոտտեղ դրանք ի մի են բերվում և հիմք տալիս համապատասխան եզրակացությունների համար. երրորդ՝ որոշ ղեպքերում մեր ընդգիմախոսները կրկնում են այն, ինչին պատասխանված է մեր հիշյալ աշխատության 7-րդ էջում, և ինչին ավելորդ ենք համարում այստեղ վերստին անդրադառնալ: Առանձին հարցերի մասին ավելի հանդամանորեն կխոսվի հայաստանյան հատուկ անունների քննության ժամանակ:

⁵ Կապ կա՞ արդյոք մի կողմից՝ Ismeriga-ի անվան և խեթ. išmeri-ի «սանձ» բառի (հ.-է. *ismen/r-՝ ըստ է. Լարոշի), մյուս կողմից՝ Gabildiš-ի և Gapihuanta տեղանվան Gapi(i)- բաղադրիչների միջև:

⁶ И. М. Дьяконов, *Изд. 2-е*, т. 2, 83, 250, 213—214, J. Grepin, „Revue des études arméniennes“, 1971. Ճիշտ դիտողությունների հետ միասին այստեղ կան բավարար չափով չհիմնավորված առարկություններ ու եզրակացություններ: Ավելորդ չենք համարում նշել, որ նշանավոր խեթագետ է. Լարոշը իր „Recueil d'onomastique hittite“ աշխատության երկրորդ հրատարակության մեջ հակված է ընդունելու մեր հիմնական եզրակացությունները:

1. Մեղ ավանդված բուն հայաստական անձնանուններն են Annija- [An-ni-ia], Huqqana- [Hu-uq-qa-na-a-], Karanni- [Kar-an-ni-], Marija- [Ma-ri-ja-], Mutti- [Mu-ut-ti-], Uanni- [Ua-an-ni-i-]:

Այս անձնանուններից երեքի խեթա-լուվական բնույթը կասկածներ չի հարուցում: Annija-, Huqqana- և Mutti- անձնանուններն ունեն խեթա-լուվական վստահելի զուգահեռներ, որոնց հիմքերը միանգամայն գոհացուցիչ կերպով մեկնաբանվում են հնդեվրոպական ծագում ունեցող խեթա-լուվական հասարակ անուններով: Նույնի աղյուսների հատուկ անունների հետադոտող Պ. Պուրվեսը An(n)-, Mutl- բաղադրիչներով հատուկ անուններին անվերապահորեն վերագրում է փոքրասիական-խեթա-լուվական ծագում: Հավանական է նաև Karanni- ի խեթա-լուվական-փոքրասիական բնույթը:

Հայաս. Annija- անվան համար հմմտ. խեթ. և լուվ. Anna-, Annanna-, Annanza-, Analla-, Animaššani-, Annitti-, Anniyasu-, Annuijani- (ար.), Annita- (իգ.): Սրանք, ըստ է. Լարոշի և այլ հետազոտողների, կալմված են խեթ. anna- և լուվ. annu(ja)- «մայր» հիմքերից, որոնք ծագում են հ.-ե. *(H)an- «արական կամ իգական նախնի» արմատից: այս արմատն ամենայն հավանականությամբ ունի մանկական բնույթ և տարածված է նաև ոչ հնդեվրոպական լեզուներում (թյուրքական, արևելա-ադրդեական և այլն): Բերված հատուկ անունների խեթա-լուվական բնույթը հավաստելու համար հիմք է ծառայում երկու հանգամանք. ա) թեև ըստ Գ. Ղափանցյանի հայասերների Annija- անվան նման անուններ կրում են նաև խուտական (Annija-), եգիպտական (Ania) ծագում ունեցող անձինք, բայց նախ՝ խուտական անունը ըստ Պուրվեսի պետք է համարել խեթա-լուվական ծագման, և երկրորդ՝ խուտերենում և եգիպտերենում չկա an- «մայր» անունով արմատ. բ) այդ բաղադրիչով հատուկ անուններ տարածված են գրեթե ողջ Փոքր Ասիայում, թեև ուշ շրջանում դրանք կարող են խառնված լինել լատինական և քրիստոնեական ծագում ունեցող անունների հետ⁷. այդ հատուկ անունների մեջ հանդիպում են ոչ միայն իգական, այլև արական անձնանուններ՝ հատկապես փույզգիական, իսավրական, կարիական: -ia-ն փոքրացուցիչ-փառաբանական բնույթի մասնիկ է, որ տարածված է հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում:

Հայաս. Huqqana անձնանունը զուգահեռներ ունի Huh(h)a- բաղադրիչով խեթական անունների մեջ՝ Huhhazlu-, Huhhanani-, Huharmati-, Huhašarpa-, Huḫazulma-, որոնք, ըստ է. Լարոշի, ծագում են խեթ. huḫha- «պապ» հիմքից: Այս հիմքը հանդիպում է նաև խեթա-լուվական այլ լեզուներում (հեթ.-լուվ. huḫa-, իիլ. ḫuḫa «պապ») և զալիս է *(H)au(H)o- «պապ (մոր կողմից)» հիմքից (այստեղից՝ հայ. հաւ «պապ»): Առանձնապես մոտ է հայաստական անձնանունը լիկիական ձևին: Սովորաբար այս անուններին են միացնում նաև լիդիական Γυγας անձնանունը⁸: Լարոշը բերում է նաև կապուպոփկյան (H)uganija [(Hu)-ga-ni-a] անձնանունը (ըստ ICKI 96, 16):

⁷ Հմմտ. Г. Б. Джаякян. Хайасский язык ..., էջ 30—31:

⁸ Է. Լարոշը (նշվ. աշխ., I հրատ., էջ 111—112), հիշատակում է նաև huḫa- (թանկագին բարի անուն) բառը (հատկապես մեկ ի-ով ձևերի համաբ.)։ Բայց, ավելի հավանական է համարում վերևում բերված վարկածը:

⁹ Հմմտ. A. Heubek. Lydiaka, Erlangen, 1959, էջ 62:

Հայաս. Mutti- անձնանվան համար 3. Ֆրիդրիխը նշում է խեթ. Muṣat-ti- (= լիդ. Μυσαττις անձնանունը)¹⁰ ենթադրելով uṣa > u տիպի ամփոփում (կոնտրակցիա)¹¹: Ֆրիդրիխի կարծիքն ընդունում են Գ. Ղափանցյանը և է. Լարոշը: Muṣa- (< Mu-) բաղադրիչը դալիս է խեթա-լուվական muṣa- «աժ» հիմքից, որ ծագում է հ.-ե. *meṣa-ից «շարժել»: Այս կարծիքը հաստատվում է երկու այլ փաստով. ա) -mu- բաղադրիչը հանդիպում է նաև հայաս. Tārū-mu- դիցանվան մեջ, որի Tārū-ն նույնական է խեթական Taraṣas դիցանվանը, և հանդիպում է նաև խուեթի մոտ (հմմտ. նաև խեթ. Taru-lilli- «Taru- աստծուն նվիրված, աստվածային»), ինչպես խեթ. Kapparijamu- դիցանունը հետազոտողները մեկնաբանում են որպես «Kapparia-ի ուժ», այնպես էլ Tārūmu-ն կարելի է մեկնաբանել որպես «Tārū-ի ուժ». բ) ինչպես կտեսնենք, ամենայն հավանականությամբ համապատասխան uṣa > u ամփոփում առկա է նաև հայաս. Karanni-ի մեջ՝ խեթ. Karuani-ի համեմատությամբ, և, հետևաբար, ընդհանուր առմամբ հայասերենին հատուկ է:

Եթե հայաս. Karanni- անձնանունը իրոք կապված է խեթ. Karuani- անձնանվան հետ (հնչյունական հարաբերությունը այնպիսին է, ինչպես հայաս. Mutti- և խեթ. Muṣatti-, հմմտ. նաև Kunni- և Kuṣanni-), իսկ այդ լիովին հավանական է, ապա նրա նկատմամբ կարելի է կիրառել այն ստուգաբանությունը, որ տալիս է է. Լարոշը Karuani-ի համար: Ըստ է. Լարոշի՝ վերջինս կազմված է խեթ. karaṣar «եղջյուր» բառից¹², որ, ինչպես հայտնի է, ծագում է հ.-ե. *k'ērāu- հիմքից + խեթ. -ar կամ *k'ērā- հիմքից + խեթ. -uṣar¹³ և կապված է խեթ. ḫaršan «գլուխ» բառի հետ: Այս գեղքում խեթ. անձնանվան համար կարելի է նշել հուն. κέρων «գլուխ», լուկ. κέρων «տեր» և մակեդ. Керон (կամ κερων — հասարակ անուն՝ «թագավոր») ցուցահաները¹⁴: Այս բոլոր ձևերի արմատն է հ.-ե. *k'ēr- «մարմնի վերին մաս՝ գլուխ, գագաթ, եղջյուր», որտեղից հայ. սար: եթե այս ստուգաբանությունը ճիշտ է, ապա հայասերենը, ի տարբերություն հայերենի, centum տիպի լեզու է և չի կարող նրա անմիջական նախորդը լինել: Ուզարիտյան տեքստերում հանդիպող ակկադ. Kar-ra-nu անձնանվան հետ նմանությունը այս բացատրության դեպքում պետք է պատահական համարել, եթե չենթադրենք փոխառություն:

Հ.-ե. միևնույն արմատից ծագող խեթ. ḫaršan «գլուխ» բառը բավական տարածված բաղադրիչ է խեթա-լուվական հատուկ անուններում՝ Ḫaršanḫila-, Ḫarṣumina- և այլն:

Պակաս հավանական է հայաս. Karanni-ն բաժանել Kar- և anni- բաղադրիչների՝ երկրորդը նույնացնելով հայաս. Anniia-ի մեջ ևս արտահայտված anni- «մայր» բառի և առաջինը համեմատելով կար. Kar-, լիկ.

¹⁰ J. Friedrich, «Kleinasiatische Forschungen», I, էջ 359—379: Mu-ṣa-> mu- անցման համար հմմտ. նաև Mutta, Muttanani, Mutalii (Muṣatalli-ի տարբերակը), Panamuti (E. Laroche, «Revue hittite et asianique», XVII, 57, 1955 և BSL, LV, 1959):

¹¹ E. Laroche, Recueil d'onomaistique hittite, Paris, 1952, էջ 136:

¹² H. Kronasser, նշվ. աշխ., էջ 64—65:

¹³ Հմմտ. H. Frits, Griechisches etymologisches Wörterbuch, Heidelberg, I, 1960, էջ 786:

kar-, ker- ($\text{kerēi} < *karon$) բաղադրիչների հետ (հմտ. Karḫuḫa- զիցանունը, որի երկրորդ բաղադրիչը հիշյալ խեթ. ḫuḫna- «սպալ» բառն է)։ այս Kar-ը նույնացվում է կարիացիների անվան հետ և հանգեցվում է Kar-դիցանվան¹⁴։

Uanni- անձնանունը է. լարոշը բխեցնում է լուվ. uan(n)is հասարակ անունից¹⁵, որի իմաստը, սակայն, նա հետադաշում որոշում է որպես «քարի սյուն, կոթող» և համեմատում հիեր.-լուվ. uan(a)i- նույնիմաստ բառի հետ¹⁶։ նա հիշատակում է նաև հիեր.-լուվ. Uana անձնանունը։ Մենք կավելացնենք Օւա- բաղադրիչով այն փոքրասիական հատուկ անունները, որոնք կապ չունեն հուն. Ψαυα-ի հետ։ Հին անատոլիական Uanni-ն վ. Դրեսլերը նույնացնում է փոյուդ. Uena-uia ($< \text{Uana-uia}$) անվան առաջին մասի, այլև (նվազ հավանականությամբ) անատ. Tuttuḫani-, Uraḫani- և այլ հատուկ անունների -uani բաղադրիչի հետ¹⁷։ Այս uen- հիմքով անունները չպետք է շփոթել uin- հիմքով անունների հետ։

Marija- անձնանվան համար հնարավոր է երկու ենթադրություն։

1) Հայաստան անձնանունների մեջ փոքրասիական տարրի ակնհայտ դերակշռության պայմաններում պատահական պետք է համարել նմանությունը խուռական, ակկադական ու այլ անձնանուններին և համեմատել խեթ. Marakkui-, Maraššali-, Maraššališa-, պիտիդ. Μαρά-μο(α), բիթ. Μαρά-, լիկ. Marra, lα-μαρα, Օա-μαρα անձնանունների և լիկ. Marivda դիցանվան, այլև Mer-, Meri- բաղադրիչներով փոքրասիական այլ անձնանունների հետ։ Փոքրասիական Mara-||Mari-||Meri- բաղադրիչի նախնական իմաստը պարզ է. ոմանք այն համեմատում են լիկ. B mara- «ավազների խորհուրդ», ոմանք լիկ. maru «սահմանում է, կարգադրում է, հրամայում է», ոմանք խեթ. Gišmar- «նիդակ» բառերի հետ¹⁸։

2) Marija-ն կարելի է համեմատել խուռ. marijannu և ուրարտ. mari-բառերի հետ, որոնք ծագում են հ. հնդկ. māya- «այր, երիտասարդ, կտրիճ, սիրելի, փեսացու» բառից. խուռերեն բառը մեկնաբանվում է որպես «երիտասարդ մարտիկ, կառավարիչ, ռազմական ազնվականության ներկայացուցիչ, ազնվական»¹⁹, ուրարտականը՝ որպես «ազնվական»²⁰։ Հայաստան ձևը գուրկ է խուռերենին բնորոշ -(a)nnu- լակկադականացված ձևով՝

¹⁴ Հմտ. Л. А. Гиппиш, Язык древнейшего населения юга Балканского полуострова, М., էջ 108—114։

¹⁵ E. Laroche, Recueil d'onomastique hittite, էջ 114։

¹⁶ E. Laroche, Dictionnaire de la langue louvite, Paris, 1959, էջ 106։

¹⁷ W. Dressler, „Die Sprache“, 10, 1, 1964, էջ 110։

¹⁸ Л. А. Гиппиш, նշվ. աշխ., էջ 116։ Ի միջի այլոց, Լ. Ա. Գիպինը Marija-ն չենում է հին անատոլիական հատուկ անունների մեջ առանց որևէ վերապահության է. լարոշը (Recueil..., էջ 113) համահունչ խեթական Marti- անձնանունը համեմատում է խեթ. marri «զենք, այն կողմը» կամ marrija- «թափել» բայի հետ։ Հայկ. հետ նույնացվող ID Maraššantian-ն (ID Maraššaniša-) մեկնաբանվում է որպես «կարմիր գետ», և նրա անունը կապվում լուվ. mar(r)u (u)a- «կարմիր» բառի հետ։

¹⁹ J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952, էջ 322, 327։ Հնդ-իրանական-խուռական լեզվական ասոցիացիաների մասին տե՛ս M. Mayrhofer, Die Arier im Vorderen Orient — ein Mythos? Wien, 1974։

²⁰ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963, էջ 89։

-(a)nnu] բաղադրիչից և միաժամանակ, ի տարբերություն ուրարտերենի, ունի -a- տարրը, այսինքն՝ հայասերենը կամ բառն առել է հին հնդկական ցեղերից անմիջաբար, կամ իուռական միջնորդությամբ, բայց դեն նեոեղիպտիկ համար ոչ բնորոշ տարրը²¹:

II. Մեզ ավանդված հայասական դիցանուններն են Baltaik [Ba-al-ta-ik], Šillili... [Ši-il-li-li...], Tarumus [Ta-a-ru-u-mu-uš], Terittitūniš [Te-ri-it-ti-tu-u-ni-iš], Unagaštas [U-na-ga-aš-ta-aš], Zakk(an...) [Za-ak-k(an-...)], ալև սկզբից փաստված նշանախմբեր տնկյուղ և ենթադրաբար վերականգնվող (Izzišt)anuš [(Iz-zi-iš-ta)-an-nu-uš] և (Kar)huhuš [(Ka-ar)-hu-hu-uš]: Հանդիպում են նաև հայաս. աստվածների՝ գաղափարադրական («U.GUR, «Inanna») և գաղափարադրական-լրացական [«U takšanas «համասարություն» (խեթ. takšatar, սեմ. takšannas «համասարություն») կամ «միջօրերի աստված» (խեթ. takšan, սեմ. -as «կապ, հոգ. միջօրե»)]²² նշանակումներ:

Հայասական դիցանուններից երկուսը՝ (Kar)huhuš (եթե հավաստի է Kar- բաղադրիչի վերականգնումը)²³, Tarumus, փոխառյալ աստվածություններ են: Սրանցից առաջինը ղուգահեռ ունի լուվ. Karḫuhaš-ի [Kar-hu-ḫa-š] մեջ, որ Կարդամիշի գլխավոր աստվածություններից երրորդն էր²⁴: -huhuš (հայաս. huḫus) բաղադրիչը նույնն է հայաս. Huqana-ի կապակցությամբ քննված huḫ(h)aš «կապ» խեթա-լուվական բառի հետ և ցույց է տալիս, որ հայասացիները դիցանունն ամբողջությամբ փոխ են առել, առանց կապելու իրենց համապատասխան huqna- «կապ» բառի հետ. բա երևում է նաև դիցանվան հիմքի այլ ձայնավորումից (a-ի փոխարեն u): Tarumus-ի Taru- բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, նույնն է խաթական Tarū-ի (ժամանակի աստված) հետ, որ, ինչպես նշվել է, ավանդված է նաև խեթերի և իուտիների մոտ: Խեթերի մոտ այս աստծու անունից կազմված է Taru-lilli-ն «Թարու աստծուն նվիրված, Թարուական, աստվածային»: Mutti- անձնանվան քննության ժամանակ մենք բերեցինք Յ. Ֆրիդրիխի և է. Լարոշի կարծիքը, ըստ որի mu-ն խեթա-լուվական muša- «ուժ» հիմքի կրճատ ձևն է: Լարոշն այդ mu-ն տեսնում է նաև Tarumus դիցանվան մեջ՝ նկատի ունենալով խեթ. Kapparijamus «Կապարյան ուժ» դիցանունը: Այսպիսով, հայաս. Tā-u-mu-ն նույնպիսի կազմություն է, ինչ խեթ. Kap-parija-mu-ն և նշանակում է «Թարուի ուժ»:

Unagastas դիցանվան -aštas բաղադրիչի համար Գ. Ղափանցյանը բերում է մի կողմից՝ խեթ. -ašti- ածանցով կազմություններ՝ նկատի ունենալով նաև հայ. -աստ ածանցը, մյուս կողմից՝ իուռա-ուրարտ. -ista, -isti կազմությամբ հատուկ անուններ (իուռ. Enništa, Ithista կամ Ithisti, Tarhisti, ուրարտ. Argišti): Մի կողմ՝ թողնելով -isti բաղադրիչով իուռական և ուրարտական անձնանունները՝ ծագման հարցը²⁵, նշենք, որ Դ. Ղա-

²¹ Հայերենում առկա այնպիսի ակնհայտ հնդկական փոխառություն համար, ինչպիսին է ջափ «ուտելիք, կերակուր» (ջամբել «մանրելով կերցնել, սնուցանել, խնամել») կարելի է ենթադրել հայասական միջնորդություն:

²² Takšanaš - ի առաջին մեկնությունը է. Ֆոռերինն է, երկրորդը՝ մերը: Կա նաև URU Takšana քաղաքանուն և Takšanūnan անձնանուն (-uman-ը ածանց է՝ հայ. -ացի-):

²³ Г. Капанян, Хаһаса..., էջ 95—96; В. Н. Хачатрян, Восточные провинции..., էջ 148:

²⁴ P. Meriggi, Hieroglyphisch - hettisches Glossar, Wiesbaden, 1962, էջ 70:

²⁵ Բացառված չէ ուրարտ. Argisti անձնանվան՝ հ. և. աղբյուրից փոխառյալ լինելը:

փանցյաճն անուշադրություն է մատնում ձայնալորման տարբերությունները: հայասերենի -ašta-ի դիմաց խոտերենը և ուրարտերենն ունեն -išti կամ -lsta, խեթերենը՝ -ašti-: վերջինս կազմում է վերացական գոյականների «չափ նշանակող ածականներից (հմմտ. talukašti- «երկարություն», palhašti- լայնություն» և այլն): այն սովորաբար համեմատվում է սլավ. ostъ-ի հետ և բխեցվում հ.-և. *os-tei-ից²⁶: Խեթերենի հայկական գուգահեռները ցույց են տալիս, որ ածանցի սկզբնական գործառնությունն ավելի լայն է եղել: Եթե հայաստան: -ašta-ն իրոք կապված է խեթ. -asti-ի, սլավ. -ostъ-ի և հայ. -աստ-ի հետ, ապա Unagaštaš-ը կարող էր հանդես գալ որպես գիցանուն վերացական երևույթի անձնավորման հիման վրա, որ հնարավոր է, բայց քիչ հավանական: -aštas-ի համար թերևս կարելի է ենթադրել խեթ. -asti-ից տարրեր ծագում (*os-tos?): Նշենք, որ Փոքր Ասիայում տարածված են եղել -աշտ(չ)-ով և -աշտւ-ով վերջացող անձնանուններ՝ վերագանցապես իգական սեռի անձերի համար՝ հար. Աշտա, փուլոգ., լիկ., պիս. Αρμαστα (պիսիգ. նաև Αρμαστα:), լիկ. պիս. Ερμαστα, լիկ. Μαρμαστα, պիսիգ. Μαρμαστα, իսսավր.-կիլ. Κρεσασταστα, փուլոգ.-լիկ. Παπαστα: Հայաս. -aštaš-ի հարցի լուծումը շատ բանով կախված է Unag(a)-ի բնույթից, որ Ղափանցյանը թողնում է առանց մեկնաբանության՝ չգտնելով իր նշած լեզուներում համապատասխան գուգահեռներ²⁷:

Անձնանունների մեջ հայաստական և խեթա-լուվական մեծ թվով բացահայտ գուգահեռների առկայությունը հիմք է տալիս հավանական համարելու Tarittitūniš գիցանվան մասին Գ. Ղափանցյանի հայտնած կարծիքը, ըստ որի Teri(t)-ը համապատասխանում է խեթ. teri «երեք» և -titūniš-ը՝ հայ. տուն, տուն («վերջավորություն, ագի, պոչ») բառերին. ըստ այսմ ամբողջ բաղադրությունը պիտի նշանակված լինի «եռատուն, եռագի»: Միայն թե այս դեպքում ձիշտ լինել չի կարող Terittitūnis-ի ղափանցյանական համեմատությունը հուն. Τριτων-ի հետ (Պոսեյդոնի որդու անունը), որ հակված են բխեցնելու հ.-և. *trito- (*triḷeto-) «խոնավ տարր, ծով» նախաձևից²⁸:

Սակայն հնարավոր է -titūniš-ի մի այլ մեկնաբանություն ևս: Սրա tit-բաղադրիչը մեծաթիվ գուգահեռներ ունի Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հատուկ անունների մեջ. հմմտ. նախահուն. Τίτωνας (Էոսի ամուս-

26 է. Բենվենիստը (Hittite et indo-européen, Paris, 1962, էջ 89) հենվելով հատկապես հայկական նյութի վրա, խեթ. -asti-ն մեկնաբանում է ոչ թե -as-ti, այլ -a-sti-ձևով, այսինքն՝ -a-ն համարում է հիմքակազմ տարր (հմմտ. հայ. խմստ):

27 Անհնար չէ «Unagastas-ի համար ենթադրել «U nagastas և (հմմտ. «U takšanas). և այդ դեպքում nagastaš-ը համարել ինչ-որ nagastis գոյականի սեռական հոլովածի (nagastayas > nagastas). հմմտ. խեթ. nakkī- «ծանր», այլև (հայերեն -աստ-ով գուգահեռների բայական ծագումը հաշվի առնելու դեպքում) uah(h)- «վախենալ, հարգել, պատվել, ակնածել, տաշակել, շրջահայաց լինել», որին վերագրում են հ.-և. ծագում և ստուգաբանորեն կապում հ. իռլ. nāt «համեստ, պարկեշտ» բառի հետ: Մեր վերոհիշյալ աշխատության մեջ Anagaštaš-ը բխեցված էր հ.-և. *ongʷ e/ostos-ից (որպես «օծյալ»):

28 J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I. 1956, էջ 1096: II. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, II, էջ 933—934: Տալու են տունն ձևերի՝ հայաստական -titūnis-ի հետ կապ ունենալու դեպքում քիչ հավանական է նրանց համար հ.-և. *dud- արմատ ենթադրելը՝ միայն գերմանական գուգահեռների հիման վրա (Պետերսոն): Ուվելե հավանական է նրանց մանկական բառեր լինելու վարկածը. հմմտ. խեթ. titita (քիթ):

տինը), Դիտա, հօն. -d̥i-ta- (տիտաններ՝ Ուրանոսի և Գեայի զավակ-տասված-ները), Դիտա (արշալույսի զիցուհին), թրակ. -titha, -tita (բաղադրիչ Germetitha զիցանվան և Nusa-tita անձնանվան մեջ), Դիտա, Դիտա- (անձնանուններ), Դիտա (զիցուհու անուն), լիդ. Դիտա- (պիոնիդ. Դիտա- (անձնանուններ), խեթ. Titai, Tittija (կապադ. Didia, անձնանուններ) և այլն: Նկատի ունենալով Հեսիոդոսի բառարանի տվյալները և d||t հնչյունական տատանումը՝ հետազոտողները, սկսած Պ. Կրեյմերից, հավանական են համարում համեմատությունը հ. հնդկ. d̥iti- «լույս, փայլ», ար. d̥it «օր» և այլ բառերի, այդ թվում նաև հայ. տի «օր» բառի հետ (հ.-ե. *dei- «փայլել, շողալ»)²⁹:

Եթե Sillili... զիցանվան վնասված վերջամասը ուղղականի վերջավորությունն է (*Silliliš), ապա կարելի է առանձնացնել -(i)li- ածանցը, որ հանդիպում է փոքրասիական և մասնավորապես խեթ. հատուկ անուններում և ցույց է տալիս պատկանելիություն, վերաբերություն կամ սերում: Խեթ. -ili-ով այս հատուկ անուններից շատերը կազմված են տեղանուններից, ժողովուրդների անուններից և զիցանուններից՝ Antaratli-, Arnili- (հմտ. հայաս. Arnlja բաղաբանունը և զուգահեռ Arn- բաղադրիչով տեղանունները), Hailili-, Hakkarpili-, Harapseli- (հմտ. Harapseki-), Hattušill-, Katapaili-, Kaškaili-, Tarhunzili- և այլն: -ili- ածանցը ծագում է կամ հ.-ե. *l-ով ածանցային ձևից, կամ, որ ավելի հավանական է համարվում, խաթական պատկանելիության ածանցից, որ առկա է նաև խեթ. դերանունների կազմության մեջ: Այս դեպքում թերևս հիշտ է sil(l)-ի մեր համեմատությունը խեթ. seli- «հացահատիկի շեղք» կամ, ավելի հավանականորեն, šēli- «սիրահարված(?)», նվիրված(?)» հիմքի հետ, մանավանդ եթե նկատի առնենք Sillili-ի՝ հայ. սիլիլ (սիլեղ, սեղեղ, սիլեխ, սեղեխ) «սիրեկան» բառի մեջ պահպանված լինելու հավանականությունը:

Zakk(an).. և Baitaik զիցանունների մեկնաբանության հարցը ավելի դժվար է: Եթե բացառենք Գ. Ղափանցյանի կողմից առաջինի համար բերվող խեթ. Zaggaga զուգահեռը (հռոմ. Zappiqaga) և լուվ. -zagani-ն, ապա կարելի է նշել խեթ. Zahapauteni իգական անձնանունը, որի առաջին մասը թերևս կապ ունի այս զիցանվան հետ³⁰:

Baltaik-ի համար հնարավոր է երկու ենթադրություն. 1) կամ -ik ածանցը խուռական ծագում ունի (այն հանդիպում է նույնպես աղյուսներում՝ լինելով հատուկ անունների կազմիչ՝ անորոշ իմաստով), և այդ դեպքում թերևս ամբողջ զիցանունը հայաստացիներին է անցել խուռական աշխարհից. Դ. Ղափանցյանը Baltai-ի կապակցությամբ հիշատակում է ակկադ. baitu «կյանք» բառը. 2) կամ -ik-ն ունի փոքրացուցիչ-փաղաքշական արժեք թերևս հ.-ե. ծագման, և այս դեպքում հնարավոր է Baltai-ի համար ենթադրել հ.-ե. ծագում (*bhī-to- «փայլուն»?): Համահունչ լիդիական baita բառի բնույթը պարզ չէ³¹: Ոչինչ չի ասում նաև Baltulhi ցեղանունը, որ հանդիպում է ուրարտական արձանագրություններում:

²⁹ Հմտ. Ա. А. Гиндиш, նշվ. աշխ., էջ 87—90: Հատկանշական է, որ մեր կողմից այս արմատին է վերագրվել հայ. տի- (տի-եգեր, տի-կիմ, տի-այր>տի) բաղադրիչը (հմտ. լիտվ. d̥idis «մեծ»), և նշվել են համապատասխան բառեր կովկասյան, խուռա-ուրարտական լեզուներում, խաթերներում (G. B. Djahukian. Armenische Miscellen, „Studia classica et orientalia Antonino Pagliaro oblata“, 2, Roma, 1969, էջ 71—72):

³⁰ Անհավանական է համեմատությունը խեթ. zah(h)- «խիլել, ջախջախել» բայարմատի հետ, որ պահպանված է հայ. ջախել, ջախջախել և քարթվ. ու ուտ. համիմաստ բառերում:

³¹ Հմտ. R. Gussmani. Lydisches Wörterbuch, 1964, էջ 75:

Հանդես, N 1

III. Մեզ ավանդված հայաստական տեղանունները (քաղաքանուններ, մասամբ նաև երկրանուններ) հետևյալներն են՝ Arhitta [Ar-hi-ta, A-ar-hi-i-ta], Aripša [A-ri-ip-ša-a, A-ri-ip-ša-aš, A-ri-ip-ša-a-an], Arniša [Ar-ni-ša], Arziša [Ar-zi-ša], Azzi [Az-zi], Haša [Ha-ša-ša], Halimana [Ha-i-ma-na], Ingalaua [In-ga-la-ua], Kam... [Ka-am...], Gašmaha [Ga-as-mi-ša-ha], Gazū [Ga-zu-u], Lahrhila [La-hi-ir-hi-la], Paḫhuteša [Pa-aḫ-hu-u-te-ša], Paraša [Pa-ra-ša], Pateu... [Pa-a-te-u...], Bittijariga [Bit-ti-ša-ri-ga]³², Šapaguranta [Ša-pa-gu-ur-wa-an-ta], Tamatta [Ta-ma-at-ta], Dug-gama(na) [Du-ug-ga-am-ma-na, Du-uq-qa-am-ma, Du-uk-kam-ma-an-na, Du-uk-ka-am-ma-an-na], Ura [U-ra]: Հայտնի է նաև մի քաղաքանուն, որի ընթերցումը կասկածելի է՝ Qa?-ad-ma?(ku?)-ša?(ta?): Հայաստյի տեղիտո-րիալում հիշատակված են Laša [La-ša-a] անունը կրող լեռներ:

Հայաստական տեղանունների համեմատությունը փոքրասիական այլ տեղանունների հետ հնարավորություն է տալիս սլարգելու կազմության ակրն-հայտ զուգահեռությունը և բացատրելու կաղմիչների մեծ մասի ծագումը: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ հայաստական տեղանունները Հայաստյի բուն լեզվից բոլորովին անկախ կազմություններ են, սակայն նկատի ունենալով փոքրասիական տարրի բացարձակ գերակշռությունը տեղանունների և հատուկ անունների մյուս կարգերի մեջ, այդ ենթադրությունը պետք է քիչ հավանական համարել: Ամենից ավելի հավանական է կարծել, որ հայաստական անունների զոնե մի մասը տեղական բնույթ ունի, և որ, հետևաբար, այդ լեզուն չի կարելի կտրել փոքրասիական և, ինչպես կտեսնենք, հատկապես խեթա-լուվական լեզուներից:

Հայաստական տեղանունների մեջ կարելի է առանձնացնել ածանցական կազմություններ և բարդություններ: Առաջինները վերջածանցավոր բնույթի են և բացահայտ զուգահեռներ ունեն փոքրասիական, երբեմն էլ ավելի հեռու տարածված տեղանունների մեջ: Դեռ ավելին, դրանց կազմությունը մեծ մասամբ խեթա-լուվական բնույթ ունի և կարող է բացատրվել հնդեվրոպական հիմքի վրա: Հայաստական տեղանունների մեջ տեղ գտած վերջածանցները հետևյալներն են³³.

1) -(a)ša (Gašmaha). այս ածանցն զգալի տարածում ունի Փոքր Ասիայի արևելյան մասերում և հարակից շրջաններում: Դ. Ղափանցյանը (նշվ. աշխ., էջ 434) այն բխեցնում է խուա-ուրարտ. և ստացական ածանցից՝ -ha ձևի a-ի մեջ տեսնելով տեղացույց վերջավորություն: Նկատի ունենալով ածանցի տարածման ոլորտը՝ այս կարծիքը կարելի է հավանական համարել, թեև հնարավոր է մատնանշել նաև խեթա-լուվական աղբյուր. հմտ. խեթ. բայանվանական -eš-ha-, -aš-ha- բաղադրյալ ածանցի -ha-ն, ինչպես նաև -(a)sa ածանցի լիկ. A -ehi-, -ahi տարբերակը (լիկ. B esi-ի դիմաց):

2) -(a)ša [Haša, թերևս նաև Aripša և Qa?-ad-ma?(ku?)-ša?(-ta?)]. այս ածանցը, ի տարբերություն -(a)ha-ի, տարածված է Փոքր Ասիայի հատկապես արևմտյան մասի տեղանուններում և ակնհայտ խեթա-լուվական ծա-

³² Քաղաքը թերևս բուն հայաստական չէ, այլ մերթ ընդ մերթ եղել է Հայաստյի կազմում:

³³ Հմտ. Г. Капанцян, Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии, «Историко-лингвистические работы», Ереван, 1956, էջ 409—462; J. Garstang, O. Gurney, The geography of Hittite empire, London, 1959.

գում ունի. այս լեզուներում այն կազմում է սեռական հոլովին զուգահեռ ստացական ածականներ՝ խեթ. -ašša (hantassša «աճականացնող»՝ hant- «աճականացնող», հիեր.-լուվ. -aša, լուվ. -ašši, լիկ. B -esi, լիկ. A -ehi, -ahi՝ բխելով հ.-ե. սեռական հոլովի *-osjo վերջավորությունից: Այսպիսով, Haja-sa- բուն իմաստով նշանակում է «խալ-ական»:

3) -(i)ja (Arnija, Arzija, Paraja, Pahhuteja)³⁴. այս ածանցը լայն տարածում ունի փոքրասիական տեղանուններում և նույնն է հայաստանյան անձնանունների -ia ածանցի հետ (Annija, թերևս նաև Marija): Ամենայն հավանականությամբ այն ծագում է հ.-ե. *-iŋo- ածանցից: Որոշ դեպքերում միևնույն տեղանունները հանդիպում են երկու տարբերակով՝ և՛ -(i)ja-ով, և՛ առանց -(i)ja-ի՝ Hupalušša և Hupaluššija, Marašanta և Maraššantija, Tapik(k)a և Tapikkija, Uilusša և Uiluššija, Zidakapišaš և Zitakapiššija³⁵: Թեև -(i)ja-ով կազմություններ կան նաև ոչ փոքրասիական տեղանուններում, բայց փոքրասիական-խեթական-լուվական տեղանունների -(i)ja-ի նույնությամբ խեթական լեզուների հիմքավազմ -(i)ja-ածանցի հետ կասկած չի հարուցում. այս -(i)ja- հերթագայում է -i-ով հիմքերի հետ, որոնց ներկայացուցիչը հայաստանում Azzī տեղանունն է. հմմտ. խեթ. hantezi(ja)-[<*(H)anti-tiŋo-], լուվ. tati(ja)- «հայր», anni(ja)- «մայր», լիկ. kbi-(ja) «այլ» և այլն:

4) -(l)t(t)a (Arhita, Tamatta). դժվար է ասել, -(i)ta- և -tta- ածանցները միանգամայն տարբեր ածանցներ են, թե միևնույն ածանցի տարբերակները: Դա փանցյանը սրանք միացնում է և օրինակներ բերում փոքրասիական ու հարակից շրջանների տեղանուններից: Սակայն նրա բերած օրինակները ակնհայտորեն տարբեր բնույթի ու ծագման են, մանավանդ եթե նկատի առնենք անձնանվանական զուգահեռները (հմմտ. խեթ. Annita, իգ. Annitti՝ հայաս. Annija-ի կողքին)³⁶: Անհնար չէ խեթական ծագում ունեցող տեղանունների մեջ տեսնել հ.-ե. *-t- տարրն ունեցող ածանցական կազմություններ. հմմտ. խեթ. -(a)tt- և -ta ածանցներով բայանվանական կազմությունները³⁷:

5) -mana, -ma [Halimana, Duggama(na)]. -ma վերջածանցով կազմությունները ևս բավական հաճախակի են փոքրասիական տեղանունների մեջ: Դ. Ափանցյանը շեշտում է -ma-ի գոյածանցական բնույթը՝ բերելով Pergam(a) (ըստ Ափանցյանի՝ խեթ. bargu «բարձր» բառից), Tarkuma (Tarku աստծու անունից), Datima [Datt(a) աստծու անունից], Aladarma (aladdari- «հացահատիկ» բառից) օրինակները, թեև նշում է նաև խեթ. -ima բայան-

³⁴ Վերջինիս tejan-ն վ. հաշտարյանը (Восточные провинции..., էջ 119, ծան. 1) նույնացնում է խու. tea- «մեծ» բառի հետ՝ մեկնարանելով ամբողջ կազմությունը որպես Pahiḫaya մեծ:

³⁵ Հմմտ. J. Garstang, O. Gurney, նշվ. աշխ., տեղանունների ցանկը:

³⁶ Г. Капанцян, Суффиксы..., էջ 426—429:

³⁷ Հմմտ. В. В. Иванов, Хеттский язык, М., 1963, էջ 187—188: Անհնար չէ ենթադրել, որ հայաս. -(t)ta-ն ծագում է -nta-ից, այսինքն՝ տեղի է ունենում n-ի անկում, ինչպես կապագովկերենում: Հմմտ. E. Laroche, Etudes de toponymie anatoliennes, «Revue hittite et asianique», XIX, 69, 1961: Վ. Ափանցյանը (Восточные провинции..., էջ 127) Tamatta-ի -at(t)a-ն համարում է հավաքական նշանակություն ունեցող խեթ. -atar ածանցի տարբերակը, սակայն վերջինս բաղկացած է -a- հիմքակազմ տարրից և -tar-/-tan- բուն ածանցից, որ վերացական անուններ է կազմում (սա էլ ունի *-t- և *-er-/-en- լրացուցիչները):

վանական վերջածանցի հետ կապելու հնարավորությունը³⁸։ Թեև *-mana-*ն համարվում է միևնույն *-ma-*ն՝ ածած *-na-*-ով, բայց *-mana-*ն Halimana անվան մեջ թերևս կարելի է դիտել որպես ինքնուրույն ածանց՝ խեթ. *-ma-na-*ին դուգահեռ (հմմտ. arunamana «ծովային»՝ aruna- «ծով» բառից)։

6) Թեև *-ua-*ն համարվում է տեղանվանական ամենատարածված ածանցներից մեկը³⁹, և նրան վերադրվում է «ամրացված կառույց» նշանակությունը⁴⁰, բայց *-ua-*-ով բոլոր կազմությունները միևնույն արժեքը չունեն։ Մի շարք դեպքերում կարելի է առանձնացնել *u-*ն որպես հիմքակազմ տարր և *u-*ն որպես ներհավելական ճնշյուն։ Այս առումով դժվար է որոշակի բանասել Ingalaşa-ի ածանցական կազմության մասին, թեև հանդիպում են Istanuşa (Istanu գիցանունից), Şapinuşa, Tuşanuşa, Uataruşa և այլ տեղանուններ։ *-ua-*-ով կազմությունները մասամբ հ.-ե. բնույթի են (հմմտ. Aḫḫiḫaşa—աքայացիների անունը), մասամբ (Միտանիին մերձավոր շրջաններում) թերևս իրոք ծագում են խուռ. սեռականի *-ue-*ից⁴¹։

7) *-uanta* (Şapaguruanta). այս ածանցը հանդիպում է փոքրասիական տեղանունների մեջ *-uant//da* ձևով⁴² և նույնն է խեթ. *-uant-* (*-mant-*) ածանցի հետ, որ ածականներ է կերտում բայերից ու գոյականներից (հմմտ. kartimūuant- «բարկացկոտ»՝ kartimūja- «բարկանալ» բայից, kistuant- «քաղցած»՝ kašt- «քաղց» գոյականից, šamankuruant- «մորուքավոր»՝ zaman-kur- «մորուք» գոյականից և այլն). *-uant-*ը բաղկացած է *-u-* և *-(a)ni* տարրերից, որոնք հ.-ե. ծագում ունեն⁴³. ամենայն հավանականությամբ միևնույն *-uant//da-* ածանցն է առկա հին անատոլիական տեղանուններում՝ Gapilūanta, Paraššuanda, Tanūanda, Tapšanūanta, Uašatuanda, Uija-nauanda (Uinuandaš), կար. Alabanda, լիկ. Arnab//uanda, որոնցից երկրորդի Arna- բաղադրիչի համար հմմտ. հայտ. Arnija քաղաքանունը։

Ինչ կարելի է ասել այս տեղանունների հիմքերի մասին։

-(i)ja վերջածանցով կազմություններից Arnija-ի Arn- բաղադրիչը բազմաթիվ դուգահեռներ ունի ինչպես փոքրասիական (հմմտ., օրինակ, կար. Ἀρνιάς, լիկ. Arnab//uanda, Ἀρνεία և այլն), այնպես էլ բարկանյան և ավելի արեմուտք բնկած տեղանունների մեջ։ Սրանց համար, եթե մանավանդ մենք գործ ունենք գետանունների և գետերի հետ կապված տեղանունների հետ, ենթադրում են հ.-ե. ծագում՝ *orno-, *ornā «ալիք, հոսանք, հեղեղ, գետ» (*er- «շարժել, հուզել» արմատից, որտեղից խեթ. arai- «բարձրանալ», arnu- «շարժել, հեռացնել, տանել, բերել»)։⁴⁴

³⁸ Г. Капанцян, Суффиксы..., էջ 424—425։

³⁹ նույն տեղում, էջ 436—437։

⁴⁰ W. Brandenstein, „Zeitschrift für Ortsnamenforschung“, 2, 1927, „Bulletin“, 1937, էջ 737։

⁴¹ Հմմտ. И. М. Дьяконов, Предыстория армянского народа, էջ 86։

⁴² Հմմտ. Г. Капанцян, Суффиксы..., էջ 417։ E. Laroche, Etudes de toponymie anatolienne, „Revue hittite et asianique“, XIX, 69, 1961.

⁴³ И. Kronasser, նշվ. աշխ., էջ 127։ В. В. Иванов, նշվ. աշխ., էջ 189, 195։

⁴⁴ Է. Ֆոռերը („Glotta“, 26, 1938, էջ 178) arna=arinna «աղբյուր» հիմքը համարում է լուվական ծագման։ Է. Լարոշը („Revue hittite et asianique“, XIX, 69, 1961, էջ 64) գտնում է, որ Arn-ով բոլոր տեղանունները չի կարելի բխեցնել միևնույն աղբյուրից և մանավանդ լուվերենից։ Հմմտ. Л. А. Гиндин, նշվ. աշխ., էջ 39—95։

Arziġa տեղանուն հանդիպում է նաև խեթական և լուվական այլ տեքստերում. հմմտ. լուվ. arziġaššiš «արծիական» և խեթ. A.ŠÀ ar-zi-ġa-aš «Արծիայի դաշա»⁴⁵: Ա. Գյոցեն Ars-, Arz [հմմտ. լիկ. erze, Arsis, պիտիգ. Arsas և այլն, ավելի հին Arzanahsu, Arza(u)ua] բաղադրիչը նույնացնում է խեթ. Parzana- «հյուրանոց, իջևան», arzanant- «տեղավորված, տնավորված» բառերի արմատի հետ⁴⁶.

Paraja տեղանվան Par(a)- հիմքը խեթա-լուվական լեզուներում ներկայացված է լայն ճյուղավորմամբ և հանդես է գալիս հատուկ անուններում (այդ թվում՝ տեղանուններում՝ հմմտ. խեթ. Parijana, Parašša(?), կար. Parableia և այլն). այն ծագումնաբանորեն կապված է խեթ. para «առաջ, դուրս, հեռու», parija(n) «միջով, այն կողմը», դենը», paru «հեռու, ավելի հեռու», լուվ. parran «առաջ, դուրս» և այլ բառերի հետ: Սրանք բոլորն էլ ծագում են հ.-ե. *per- արմատից [այստեղից են հուն. περ-ը և թրակ.-պարա-ն (տեղանունների բաղադրիչ)՝ «գետանց, անցահուն, ուղի» իմաստով]: Paraja անվան մեր համեմատությունը թրակ. Βερ(ρ)οια, Beroe տեղանվան հետ (հ.-ե. *bher-, որից հայ. բերրի)⁴⁷ ավելի քիչ հավանական է, թեև ոչ անհնար, եթե նկատի առնենք թրակա-փոքրասիական և թրակա-հայաստական այլ դուրահանունների առկայությունը ևս⁴⁸: Կարելի է նույնիսկ ենթադրել Հայաստանում թրակյան շերտ:

Pahhuteia տեղանվան Pahhu- բաղադրիչը ամենայն հավանականությամբ առկա է նաև Pahhuua և Pahhurina երկրանուններում և թերևս պահպանվել է Պախուենից վանքի անվան մեջ⁴⁹: Սակայն համապատասխան խեթա-լուվական հիմք առայժմ դժվար է նշել: Եթե բացառենք կապը Բաքոսի անվան հետ (լիկ. Bakl-, հուն. Βάκχους, Βάκχος և այլն), որ մենք նախկինում ենթադրում էինք⁵⁰, ապա անհավանական չէ կապը կամ խեթ. panku- «ամբողջ, բոլոր. ամբողջ զորք, ամբողջություն, ժողով. ազատանի» բառի հետ, որ ծագում է հ.-ե. *bhngghu- հիմքից [հմմտ. հ. հնդկ. bahu- «խիտ, հարուստ, շատ», հուն. πᾶς «հաստ», հայ. (<իրան.) բազում «շատ»], կամ խեթ. pahhur, pahhuar «կրակ» բառի հետ (հ.-ե. *peuōr-, *pūr-, սեռ. *pu- nes, ներդ. *puueni հմմտ. հայ. հուր, հն-ոց). թեև վերջին համեմատությունը նվազ հավանական է թվում հիմքերի տարբերության պատճառով, բայց նրա օգտին է խոսում հայ. Պախուենից ձևը, որ եթե կապ ունի Pahhu-ի հետ, ապա ճշտիվ համապատասխանում է խեթ. բառի տր.-ներգ. pahhueni ձևին:

-(i)l(l)a ածանցով կազմված տեղանուններից Arhita-ի համար միանգամայն հավանական է համեմատությունը խեթ. irha- (arha-) «շարք, շրջնադր, եզր, սահման», հիեր. լուվ. arha- «սահման» (հզն. «շրջան, տերի-

⁴⁵ E. Laroche, Dictionnaire de la langue louvite, էջ 32:

⁴⁶ A. Goetze, The linguistic continuity of Anatolia as shown by its proper names, „Language“, XXX, 3, էջ 76:

⁴⁷ Г. Б. Д ж а у к я н, Хайасский язык..., էջ 59: Թրակյան տեղանվան մասին տե՛ս D. Deischeu. Die thrakischen Sprachreste, Wien, 1957, էջ 54:

⁴⁸ Հմմտ. В. Ю. О т к у п щ и к о в, Балкано-малоазийские топонимические изоглоссы. «Балканское языкознание», М., 1973, էջ 5—29: Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 79—81:

⁴⁹ В. Х а ч а т р я н, Восточные провинции..., էջ 119:

⁵⁰ Г. Б. Д ж а у к я н, Хайасский язык..., էջ 60—61: Որոշ հետազոտողներ կապ են տեսնում Բաքոսի անվան և խեթ. ԾԻՏ paiminsa- «փայտ (?), ճիպոտ (?)» բառերի միջև:

«որոնք», խեթ., լուվ., հիեր. լուվ. arha- «զուրա» և այլ բառերի հետ⁵¹, որոնք, ըստ Բելարդի⁵², բխում են հ.-և. *erə-, *orə- «նոր, հեռու, հեռանալ, հեռացնել» արմատից: Ընդհանուր իմաստը պետք է լինի «սահմանափակ, լեզերական»: Նկատի ունենալով Արխիտայի եզրային դիրքը՝ Հայաստանի հարավային մասերում (Իշուվայի մոտ) գտնվելը՝ ավելի քիչ հավանական է նրա անունը բխեցնել արևմտակովկասյան աղբյուրից (հմմտ. աբխազ. арха «հարթություն» և բրբռ. т/а «վայր, տեղ»):

Եթե Tamatta տեղանվան -tt-ն իրոք խեթա-լուվական ածանցական մասնիկի տարր է, ապա պատահական պետք է համարել ակկադ. Teman և ասոր. Tnana տեղանունների հետ ունեցած նմանությունը, և այն հիեր. լուվ. Ta-a-ma տեղանվան հետ միասին (հմմտ. նաև խեթ. Tamattasa?) բխեցնել հիեր.-լուվ.-լիդ. (am- արմատից (հմմտ. հիեր. լուվ. ta-ma-ha «կառուցել», լիդ. tam- «կառուցել»)⁵³, վերջինս, եթե ընդհանուր վերականգնումը ճիշտ է, գալիս է հ.-և. *dem- «կառուցել» արմատից: Այս դեպքում Tamatia-ի ընդհանուր իմաստն է «կառուցվածք, շինվածք, շեն»⁵⁴:

-mana ածանցով կազմված Halimana քաղաքանվան Hali- անկախ բաղադրիչի գոյությունը հաստատվում է խեթական աղբյուրներում հիշատակված Haliua և Halila (վերջինս կաշկացիների երկրում) տեղանունների գոյությամբ (Hali-ի հետ հավանաբար կապ չունեն ավելի հեռու ընկած Haliua և Haliuua վայրերի անունները): Halip- բաղադրիչով Halipašua, Halipšura, Haliputa տեղանուններում թերևս իրոք պետք է վերականգնել Halip- և ոչ Hali- բաղադրիչը, եթե զրանք կապվում են խալիբների անվան հետ⁵⁵: Hali- բաղադրիչը մենք հակված ենք կապելու խեթ. hali(ia)- «պահակախումբ, պահակ, գիշերային պահակ» բառի հետ, որ իր հերթին ստուգաբանորեն կապվում են haliia- «ծնկի գալ» բայի հետ և բխեցնում հ.-և. (s)kei- «թեքել, թեք. հող. կրունկ, ծունկ, աղբյուր» արմատից⁵⁶:

Այլ է վիճակը, եթե Halimana անունը կապ ունի Almina (Almena) քաղաքի (խեթական պետություն արևելյան ծայրագավառում) անվան հետ⁵⁷. Համանուն քաղաքանուններ (Almena) հայտնի են նաև Պափլագոնիայում և Բալկանյան թերակղզում⁵⁸. Բալկանյան քաղաքանունը հասարկվում է թրակյան և բխեցվում հ.-և. *al- «առել, աճեցնել, սնել» արմատից՝ -m- բաղադրիչով⁵⁹:

Duggama անունով քաղաք (առանց na-ի) հիշատակված է նաև Pabhuva

⁵¹ Г. Капанцян, Хайаса..., էջ 60, ծան. 1: Г. Б. Джаукян, Хайасский язык..., էջ 71—75:

⁵² W. Belardi, „Ricerche linguistiche“, 2, էջ 197—202:

⁵³ H. Krapasser, նշվ. աշխ., էջ 127: R. Gusmani, նշվ. աշխ., էջ 208:

⁵⁴ Վ. Խաչատրյան (Восточные провинции..., էջ 127) այս անվան հետ է համեմատում Tamata տեղանունը:

⁵⁵ В. Хачатрян, Восточные провинции..., էջ 127:

⁵⁶ H. Krapasser, նշվ. աշխ., էջ 38: Ավելի քիչ հավանական է կապ տեսնել հայտնի տեղանվան և հիեր. լուվ. hali- «օչ, ժամանակ» բառի միջև:

⁵⁷ В. Хачатрян, Восточные провинции..., էջ 68—71:

⁵⁸ Ю. В. Оккупников, նշվ. աշխ., էջ 7:

⁵⁹ D. Detschew, նշվ. աշխ., էջ 13:

երկրում⁶⁰ և Dugama անունով վայր Ուրմիա լճից հարավ⁶¹։ Վերջինիս անունը կարող է ծագած լինել քաղաքացիների տարաբնակությունից, եթե նմանությունը պատահական չէ։ Հայաստան Duggama(na)-ի հիմքը անհավանական չէ համեմատել խեթ. dug(ḡ)-, duk(k)- «տեսանելի լինել, հարգվել» բայարմատի հետ, որից խեթերենում -a- ածանցով կարող էր կազմվել duḡḡa- գոյականը՝ «տեսանելիություն, հարգանք» իմաստով⁶²։ Թերևս այս նույն տարրն է փոքրասիական այլ հատուկ անուններում՝ կար. tukī-o-, tük-, հիյ. Tuk-oleis, Duk-eris, իսավր. Dukkōs, եթե սրանց d//tug/ k-ը կապ չունի լուվ. duḡa- «դնել» բառի հետ [խեթ. dā(l)-], որ գալիս է հ.-ե. *dhē- «դնել» արմատից։

Ածանցական կազմություն ունեցող Gasmīaha, Hāḡasa, Ingalaua, Šapaguranta, թերևս նաև Azzi տեղանունների հիմքերի բնույթի մասին առաջիմ դավար է որևէ հավաստի բան ասել։ Gasmī-ի մեր համեմատությունը հայ. կազմ. հուն. γασμ- և Ingalaua-ի Ingal-ի նույնացումը ակկադ. ekallu «շումեր. ē-gal բառերի հետ (Գ. Ղափանցյան) կասկածելի են. Ingalaua-ի հետագա Անգեղտուն անվանումը (որպես «անգեղ տուն՝ անգղի տուն») կարող է ծողովրդական ստուգաբանության արդյունք լինել։ Հավիվ թե որևէ կապ չունի Šapagur-ի և լիկ. B sabaci «առաջնորդներ» բառի կամ դակիա-կոն Saboces (Σαβωκες) ցեղանվան միջև (համառ. նաև փոյուղիական Σαβωκες/δωκες դիցանունը, որտեղից ծագած են համարում հայ. աստուած բառը)։ Թեև Azzi-ի համեմատությունը հայ. ազն, սեռ. ազին բառի հետ հավանական է, բայց այժմ մեզ ավելի հավանական է թվում համեմատությունը տրոյական ''Αζεια-ի հետ, որ Տոմաշևիցը կապում է Հեսիթիոսի բառարանում հիշված ''αζιν «մեծ, բարձր» բառի հետ⁶³. նախ՝ Azzi երկիրը սկսած խեթական ժամանակներից կոչվել է նաև «Բարձր երկիր» և հիմնականում նույնացվում է հայկական աղբյուրների Բարձր Հայքի հետ. երկրորդ՝ այս դեպքում կարելի է ձիշտ համարել Azzi-ի նույնացումը Ազուրդ-ի հետ՝ նկատի առնելով, որ հետազոտողների կողմից ''Αζεια-ի անունը կապվում է թրակյան ''Αζωγας (''Αζωγας, ''Αζωγας) քաղաքանվան հետ⁶⁴։ Սա, ինչպես այլ դեպքերում, ենթադրել է տալիս Հայաստանում թրակյան տարր⁶⁵։

Հայաստանի մյուս տեղանուններից Սիս-ն տեղահայտորեն խեթա-լուվական ծագում ունի. համառ. լուվ. և հիեթ. լուվ. uḡa- «մեծ», որ հանդիպում է

⁶⁰ В. Хачатрян, Восточные провинции..., էջ 117—118։

⁶¹ Г. А. Мелникшвили, Упартские клинообразные надписи, М., 1950, էջ 42։

⁶² Այն համեմատվում է ալթ. duket «թվալ, երևալ, տեսնվել» բառի հետ. համառ. J. Friedrich, նշվ. աշխ., 1. Ergänzungsheft, էջ 21։

⁶³ W. Tomaschek, Die alten Thraker, „Sitzungsbericht d. phil. Klasse d. Kais. Akad. d. Wiss. zu Wien, 131, 1894, էջ 35։

⁶⁴ D. Detschew, նշվ. աշխ., էջ 7։

⁶⁵ Թրակյան քաղաքանունը հավանաբար կապ չունի թրակյան այն անձնանունների Ահ- (Աս- և այլն) բաղադրիչի հետ, որոնք համեմատվում են կիլ. Ասդ- և սկյութ. Αζας, Αζας, Αζαγας անձնանունների հետ (D. Detschew, նշվ. աշխ., էջ 7)։ Սկյութական անունները ծագում են իրան. *hatva- «խսկական, արդար, ճիշտ», *hatva-ka ձևերից, որոնք իրենց հերթին բխում են հ.-ե. *snt-jo-ից (սուղղություն վերցնել, գնալ)։ Հետաքրքրական է նշել, որ Azzi և Hāḡasa անունների իրանական ծագման դեպքում դրանք, բարբառային տարբերությամբ, կարող էին միևնույն բանը նշանակել, որ, սակայն, թիշ հավանական է։ Նշենք, որ կան խեթ. իդ. Azzīa, Azzari անձնանուններ, որոնց ծագումը հայտնի չէ։

նաև որպես տեղանունների բաղադրիչ և ինքնուրույն տեղանուն. հմմտ. Arez-ura, Ura-ḫattušaš, կար. Yr-ōmos, It-yra, լիկ. Ura-, Ora- և այլն⁶⁶:

Aripša քաղաքանունը մենք այժմ հակված ենք բացատրելու արևմտակովկասյան (աբխազ-ադրդեական) հողի վրա: Ինչպես հայտնի է, բոտ խեթական արձանագրության՝ Aripša-ն ծովային դիրք ուներ և գտնվում էր կաշկացիների երկրի մերձակայքում: Եթե կաշկացիներն իրոք չերթևաներ ինքնիներն են, ինչպես ենթադրում են շատ հետազոտողներ՝ նկատի ունենալով չերթևանների կաշագ, կեշագ, կոսոգ ինքնանվանումը⁶⁷, ապա Aripša-ի -rsa-ն կարելի է մեկնել կաբարդ., ադրդ. иси «ջուր» բառով, որ շատ տարածված է հյուսիսային կովկասյան տեղանուններում (հմմտ. Сиулиս). այս դեպքում Arip-ն նույնպես կտրող է արևմտակովկասյան ծագում ունենալ:

Նկատի ունենալով հայաստան անունների գերակշռող մեծամասնության խեթա-լուվական դուգահեռների ակնհայտությունը՝ կարելի է ընդունել Գ. Ղափանցյանի կողմից Lahirhila-ի երկրորդ մասի՝ hila-ի համեմատությունը խեթ. Ehlila «բալ. փարախ, զոմ» բառի հետ (հմմտ. նաև հայ. հիւղ, որ հանդիպում է նաև հուլ. հիղ, հեղ ձևերով և նույնն է խուլ բառի հետ): Այս համեմատությունը հաստատվում է խեթ. Parsanhila և կար. Suaggela (<*Suuahila) տեղանունների միջոցով, որոնց մեջ նույնպես առկա է hila- տարրը. կարևոր է նշել, որ համապատասխան լիկ. qia-ն մեկնաբանվում է «տաճար»: Սակայն դժվար է համաձայնել Lahir- բաղադրիչի Ղափանցյանական մեկնության հետ. Գ. Ղափանցյանն այն համեմատում է ալկադ. Lahira անձնանվան հետ՝ ամբողջ տեղանունը մեկնաբանելով որպես «Լախիրի հյուղ»⁶⁸: Հայաստան տեղանվան մեջ սեմական տարրի այսպիսի դուգակցումը քիչ հավանական է, թեև առայժմ դժվար է հավաստի որեէ բան ասել Lahir-ի բնույթի մասին: -rlln-ով հիմք ենթադրելու դեպքում այն կարելի է համեմատել խեթ. Lahinaššiš (Lahinn-ից) տեղանվան և Lahinaziti- անձնանվան հետ: Անհնար չէ կոպ տեսնել Հայաստան հիշատակվող Lāhbi լեռների և Lahirhila քաղաքի անունների միջև, բայց այս դեպքում անբացատրելի է մնում Lahir-ի -ir-ը: Խիշ. Labhuert անձնանունը է. Լարոշը համեմատում է խեթ. Giš lahura «գոհոտեղան(?)», իսկ Lahba- անձնանունը՝ lahba- «սաղմական արշավանք» բառերի հետ, բայց այս անձնանունների կապը Lahir-ի հետ կասկածելի է:

Եթե մի կողմ թողնենք Pateu... պակասավոր տեղանունը հետադաժթառիճ գյուղի անվան մեջ պահպանված խեթ. ադբյուրների Bittijariga (Pattnariga?) տեղանվան հետ նույնացնելու փորձը⁶⁹, որ չի հաստատվում վերջինիս ավելի ստույգ ընթերցանությամբ⁷⁰, ապա Pateu-ի համար կարելի է նշել փոքրասիական և ոչ փոքրասիական, հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական մեծաթիվ դուգահեռներ: Սակայն հայաստան անունների փոքրասիական դուգահեռների հավաստիությունը մեզ հիմք է տալիս կանգ առնելու նրանց վրա. հմմտ. հին անատ. Paduua անձնանունը և նրանից կաղմբված Paduanda տեղանունը, որոնք համեմատվում են լիկ. pad-mruwa,

⁶⁶ Հմմտ. և E. Laroche. Dictionnaire de la langue louvite, էջ 102:

⁶⁷ Կա նաև հակառակ կարծիքը. հմմտ. Н. Г. Волкова, Этнонимы и племенные названия Северного Кавказа, М., 1973, էջ 22:

⁶⁸ Г. Капанцян, Хайаса... էջ 60, ծան. 1:

⁶⁹ Նույն տեղում, էջ 59:

⁷⁰ Հմմտ. В. Хачатрянц, Восточные провинции... էջ 54:

կար. pđov, peđe- հատուկ անունների (այդ թվում՝ նաև տեղանունների) հետ, և որոնց համար որոշ կասկածով նշվում է հ.-ե. *ped||pod- «ոտք» արմատը (այստեղից են խեթ. paia- «ոտք», peđa- «տեղ, վայր» բառերը): Սրանից պետք է ենթադրել, որ քաղաքն ունեցել է հարթավայրային դիրք⁷¹:

Bittijariga-ի երկրորդ մասը պահպանված է հայկական տեղանուններում հաճախակի հանդիպող առին-ի (առինն, առինջ) մեջ, որ պետք է անհնա «գյուղ, շեն» իմաստը⁷², եթե առաջին մասը կապ չունի Pāteu...-ի հետ և արտասանվել է ձայնեղ B-ով, ապա կարելի է նշել խեթ. peda- «տանկ», լիդ. bita- «խել» բառերը (կամ խեթա-լուվական համահունչ այլ բառեր):

Kam... պակասավոր քաղաքանվան այս բաղադրիչը հանդես է գալիս փոքրասիական և ոչ փոքրասիական բազմաթիվ տեղանունների մեջ. նշենք առաջին հերթին լիդ. Kama-n-dōlos, ոչ լուվ. Kam-ure- (տեղանվան կաղմում), որոնք համեմատում են լիդ. hri-km.ma-ի հետ և վերականգնում ընդհանուր *ka.n(a)- արմատը: Հմմտ. նաև Kamisa, Kamala, Kamama, Kama-hana և այլ տեղանունները: Պարզ է սրանց կապը հ.-ե. *kam-er- և *kam-p- հիմքերի հետ («ծռել, կամար կաղմել» իմաստով). հնարավոր է, որ բոլոր տեղանունների մեջ մենք գործ չունենք հնդեվրոպական արմատի հետ, և նույնիսկ *kam-p-ի և *kam-er-ի տակ Յ. Պոկոռնու «հնդեվրոպական ստուգաբանական բառարանում» բերվող մի շարք ձևեր անմիջական հնդեվրոպական չեն: Պուրվեսի նշած նույնան Kamari-ին, որ հիշատակում է Ղափանցյանը՝ համեմատելով հ.-ե. *kam-er- նախաձևից ծագող բառերի հետ⁷³, խուռական չէ. խուռերենում այդպիսի արմատ չի հայտնաբերված:

Առայժմ դժվար է որևէ հավաստի խոսք ասել Gazu տեղանվան մասին, որ Գ. Ղափանցյանը համեմատում է, մի կողմից, կաշկայական G||Kazzapa քաղաքանվան և Պոնտոսում հիշվող Gazzura (-ura բաղադրիչի համար հմմտ. Ura քաղաքանվան մասին ասածը) ամբողջի անվան հետ⁷⁴: Եթե ճիշտ է առաջին համեմատությունը, ապա Gazu-ն կապ չունի Պալա երկրում (հետագա Պախլապոնիայում) գտնվող Gašša լեռանվան ու խեթ. Gašša անանվան հետ, և թերևս կամ պետք է որոնել կովկասյան աղբյուր, կամ ընդունել անվան ստուգաբանական կապը ուրարտ. gazuli «գեղեցիկ, լավ» բառի հետ⁷⁵ (այսինքն ենթադրել հայաստական տեղանուններում կովկասյան կամ ուրարտական շերտ): Եթե ճիշտ է երկրորդ ենթադրությունը, ապա հայաստական քաղաքանունը հին անատոլիական ծագում ունի (հմմտ. -ura)⁷⁶:

Վերևում բերված փաստերի հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրակացությունները.

⁷¹ Մեր «Хайаса...» աշխատության մեջ այս տեղանունը համեմատված է խեթ. pattar «սկուտեղ(?)» կամ «գամբյուղ(?)» և հայ. պատ բառերի հետ, որ պակաս հավանական է: Քիչ հավանական է նաև համեմատությունը խեթ. Pitasša տեղանվան հետ, որ Վ. Գեորգիևը (Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 172—173) բխեցնում է հ.-ե. *pidos «աղբյուր» նախաձևից:

⁷² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1, Երևան, 1971, էջ 258:

⁷³ Г. Капанян, Хайаса..., էջ 224:

⁷⁴ Նույն տեղում, էջ 88:

⁷⁵ Г. Б. Джаукян, Хайасский язык..., էջ 82:

⁷⁶ Ինչ վերաբերում է Gazz-ին, ապա է. Ջարոլը («Revue hittite et asianique», XIX, 1961) այն նույնացնում է խեթ. gazz-ի (մի տեսակ աման) բառի հետ:

1) Հայաստական հատուկ անունների մեջ ակնհայտորեն գերակշռող են փոքրասիական տարրերը: Հայաստական անձնանունները, դիցանունները և տեղանունները մեծ մասամբ զուգահեռներ ունեն փոքրասիական համապատասխան հատուկ անունների մեջ: Որոշ դեպքերում մենք գործ ունենք պարզ փոխառությունների հետ, բայց ընդհանրությունների մեծ մասը պետք է բացատրել հայաստական լեզվի՝ փոքրասիական լեզուների հետ ունեցած ցեղակցական կապերով: Կարելի է նշել նույնիսկ որոշ օրինաչափ համապատասխանություններ. այսպես, հայասերենին բնորոշ է խեթական միջձայնավորային *h-h*-ի դիմաց համապատասխան պայթականի առկայությունը (հմմտ. խեթ. *huḫḫa-* և հայաս. *Huqqa-*, թերևս նաև խեթ. *Tarḫu-* և հայաս. *>հայ. Snpp. Ինչպես կար. Tark-, Otork-, լիզ. Trok-, Taeg-, աշ. լուվ. Tark-, Trok-), սյա>u* ամփոփումը (հմմտ. հայաս. *Mutti-' Muḡatti-ից*)⁷⁷:

2) Նկատի ունենալով, որ հայաստական անունների հետ զուգահեռներ ունեցող լեզուները հնդեվրոպական բնույթի են, և որ համեմատվող անունների մեջ առանձնացվող տարրերը մեծ մասամբ հնդեվրոպական ծագում ունեն, կարելի է եզրակացնել Հայաստայի լեզվի համար փոքրասիական-հնդեվրոպական ծագում: Դեռ ավելին. կարելի է ցույց տալ հայաստական զուգահեռների հատուկ մերձավորությունը հին անատոլիական հ.-ե. լեզուներից լուվա-լիկիական խմբին (լուվերեն, հիեր. լուվերեն, լիկիերեն):

3) Հայաստայի անուններում կարելի է մատնանշել արևմտակովկասյան, խուռա-ուրարտական, թերևս նաև սեմական տարրեր, բայց բնիկ փոքրասիական-հնդեվրոպական տարրը ակնհայտորեն գերակշռում է: Եվ սա հասկանալի է, եթե նկատի առնենք Հայաստայի՝ Միտանիից ունեցած զգալի հեռավորությունը և նրա ազդեցության ոլորտից դուրս լինելը:

4) Մեր «Հայերենը և հնդեվրոպական լեզուները» աշխատության մեջ (էջ 79—81) բերված են զգալի թվով թրակա-հայաստական զուգահեռներ: Այժմ անդրադառնալով այդ հարցին՝ կարելի է անել երեք հնարավոր ենթադրություն. դրանք՝ ա) կամ նույն տիպի զուգաբանություններ են, ինչպիսիք առկա են Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հատուկ անունների միջև⁷⁸, բ) կամ պատահական նմանություններ են, գ) կամ ենթադրել են տալիս հայաստական տերիտորիայում թրակյան էթնիկական տարրի ճշմարտությունը հավանաբար ընդգրկում է երեք ենթադրությունը միաժամանակ, այսինքն՝ մի շարք զուգահեռներ պատահական բնույթ են կրում, մնացած դեպքերում կարելի է նշել մի կողմից՝ թրակա-հայաստական զուգաբանություններ՝ պայմանավորված ավելի հնում գոյություն ունեցած մերձավոր կապերով, մյուս կողմից՝ Հայաստանում թրակյան էթնիկական տարրի առկայություն: Վերջին դեպքում պետք է կարծել, որ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից Հայկի պապին՝ Թիրասին, թրակացիների նախահայր համարելը իրոք հին հարաբերությունների արձագանք է: Որ Հայաստանում և մերձավոր վայրերում հնում եղել են թրակյան ցեղեր, երևում է Ստրաբոնի հայտնի տողերից. «Ասում են նաև, թե ինչ որ թրակացիք (կոչված սարաբարաս⁷⁹, այն է՝ զլուխ կտրող)

⁷⁷ Դժվար է ասել, կապ կա՞ արդյոք Տորբի հոր՝ Պասքամի, անվան և խեթ. *Paškuqa-* դիցուհու անվան միջև (հմմտ. նաև կար. *Bskove-* անձնանունը, խեթ. *Paškuḡatti-* և այլն), որոնք է. կարողը բխեցնում է խեթ. *paskuḡai-* «անուշադրության մատնել, արհամարհել» բայից: Սակայն Պասքամի համար հմմտ. խեթ. *pašik-* «ամրացնել»:

⁷⁸ Հմմտ. Ю. В. Откупщиков, նշվ. աշխ., էջ 5—29:

⁷⁹ Փոխանակ սարաբարաս:

բնակվել են Հայաստանից վերև Գուրանացոց և Մարաց մոտ»⁸⁰, թեև սարա-պարա բառը բացատրվում է իրանական աղբյուրով (հմմտ. ավեստ. sarah- «զուխ» և par- «ծակել, կտրել»), բայց այն թրակացիների միջնորդությամբ է Հունաստան հասել⁸¹։ Հայասցիների և հայերի՝ թրակացիների հետ ունեցած վաղ շփումների մասին են խոսում, օրինակ, հետևյալ փաստերը. Սկայ-ուրդի անվան Սկայ-ը թրակյան սկայ ցեղանունից է և ոչ սակերի անունից, ինչպես կարծում է Գ. Ղափանցյանը. Տուրք անունը իր ու ձայնավորմամբ կարող է աղբյուր ունենալ կամ կարիերենը (հմմտ. Otork). կամ, որ առելի հավանական է, թրակերենը (հմմտ. Torkos, Tarkos անձնանունը, որ ծագում է նույն աղբյուրից, ինչ փոքրասիական դիցանունը). թրակյան և հայասական մի շարք անունների նմանությունը թերևս պատահական չէ՝ թրակ. Arni- (տեղանուն) և հայաս. Arni- (ընդհանուր փոքրասիական Arn- հիմքից), թրակ. Ber(p)os (քաղաքանուն) և հայաս. Paraja, թրակ. Karpas (ցեղանուն) և հայաս. Gašmaha, թրակ. Patavissa (տեղանուն) և հայաս. Pateh..., թրակ. -tit(h)a (դիցանվան և անձնանվան յուրաքանչյուր) և հայաս. Terittituniš (բաղկանշան և փոքրասիական ալլ գուգահեռներով) և ալլն։

5) Հայաստանի լեզվի և հայերենի փոխհարաբերության մասին կարելի է նշել հետևյալը.

ա) Եթե հայասերենը իրոք պատկանել է խեթա-լուվական լեզուների խմբին, ապա հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային ընդհանրությունների զգալի մասը պետք է դա հայասերենից։ Մեր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» գրքում (Երևան, 1970) բերված են այդ զուգահեռները, և նույնիսկ փորձ է արված որոշ դեպքերում տարբերակել բուն հայասական բառերը խեթա-լուվական այլ բառերից։ Միաժամանակ, եթե իրոք Հայաստանի տերիտորիայում կային թրակյան ցեղեր, այդ նույն գրքում բերված փոխառությունների զգալի մասը պետք է եկած լինի նրանցից։

բ) Հայաստանի պատմության, աշխարհագրության, լեզվի ուսումնասիրողները նշել են զգալի թվով զուգահեռներ հայասական անձնանունների, դիցանունների ու տեղանունների և հնից ավանդված հայկական անձնանունների, դիցաբանական անունների ու Հայկական բարձրավանդակի մի շարք տեղանունների միջև, որոնք բերված են մեր «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» աշխատության մեջ (դրանք այս կամ այն առիթով մասամբ հիշատակվեցին վերևում)։ Այստեղ մեր նպատակից դուրս ենք համարում դրանց հանգամանալից քննությունը։ Եթե նկատի առնենք, որ պահպանվածը եղածի մի շնչին մասն է, ապա կարելի է խոսել այն խոր ազդեցության մասի, որ թողել է Հայաստան Հայաստանի օնոմաստիկայի վրա⁸²։

գ) Եթե հայասական տեղանունների գոնե մի մասը բուն հայասական ծագում ունի, և հայասերենն իրոք ազդել է հայերենի վրա (հանդես դալով

⁸⁰ Ս տ ր ա բ ո ն, քաղեց և թարգմանեց 2. Աճառյան, 1940, էջ 68։

⁸¹ D. Detschew, նշվ. աշխ., էջ 423։

⁸² Զանազան հետազոտողների կողմից անցկացված զուգահեռներին այստեղ ավելացնենք Arhita (քաղաք) — Խրիսեփ (գավառ Ադնիքում), Duggamana (քաղաք) — Թեփման (համապատասխանում է նախկին Տուրուբերանի Մարգաղի գավառին), Halimana (քաղաք) — Ալուման (ակադ. Alamun՝ գյուղ վասպուրականի Անձեաքի գավառում), Ura (քաղաք) — Ուրի (Հուրի, գյուղ՝ Գուգարքի հին Քաջաց քաղաքը) և այլն։

նրա մեջ որպես կողմնակի հնդեվրոպական շերտ), ապա հայերենում պետք է լինեն Հայաստանի հատուկ անուններին համահունչ հասարակ բառեր: Որպես հավանական զուգահեռներ կարելի է նշել հետևյալները. Šillili... [դիցանուն <šēli- «սիրահարված (?), նվիրված (?)»]—սեղեղ (սիղիլ, սեղեխ) «սիրեկան». Tarumui- (անձնանուն <Tarui—ժամանակի աստված՝ խաթ. > խեթական)—տարի, սեռ. տարույ. Terittitūni- [դիցանուն t(e)ri- «երեք» և (t)itūni- «պոչ, վերջավորություն» կամ «օր. լույս, փայլ»]—երի- (երի-g-u) «երեք» և տտուն (տունն) կամ տի- «մեծ» (տի-կիմ, տի-եզեր-f, տէր <տի-այր). Arziia- (տեղանուն <Earzana «Հյուրանոց, իջևան») —արու-արձան(?). Azzi (երկրանուն՝ azzu- «ժողովուրդ» բառից [—ազն, սեռ. ազին(?)] Hajaša (երկրանուն)—հայ «հոկա». Kam... (տեղանուն <kam- «ծուռ, կամարած») —կամլել «մեջքը կապել». Paraja (տեղանուն <š.-ե. *per-) —պար, պարա- «շուրջ». Tamatta (տեղանուն <tam- «կառուցել» <š.-ե. *den-) —ամալի «տանիք»⁸³:

դ) Եթե հայասերներ իրոք պատկանում է հնդեվրոպական լեզուների խեթա-լուվական կամ հին անատոլիական խմբին, ապա պետք է հայերենին ձուլվելու բնթացքում նրա մեջ թողած լինի զգալի թվով հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով: Այս նույն վիճակը պետք է լինի, եթե հայերի կազմի մեջ մտել են թրակյան ցեղեր: Այսպիսով, լիովին հնարավոր է, որ հայերենում պահպանված հնդեվրոպական շատ արմատներ, որոնք անմիջապես չեն զալիս հնդեվրոպական լեզվից և հայերենի բուն հնդեվրոպական միջուկին չեն պատկանում, ունենան հայասական և թրակյան ծագում: Նշանակում է՝ մեր «Очерки по истории дописменного периода армянского языка» գրքի մեջ (Երևան, 1967) առանձնացված հնդեվրոպական այն բառերի մի մասը, որոնք շեղվում են բուն հայերենի հնչյունական օրինաչափություններից, պետք է բացատրվի որպես հայասական և, թերևս, որպես թրակյան⁸⁴:

6) Խեթական պետության արևելյան ծայրագավառներում գտնվող երկրների ժողովուրդների մեջ, անշուշտ, նույնպես եղել են խեթա-լուվական բնույթի ժողովուրդներ: Ընդհանրապես այս ծայրագավառներում պետք է բնակված լինեին խեթա-լուվական-հայասական, խուռա-ուրարտական, կովկասյան և այլ բնույթի ժողովուրդներ: Անհնար չէ, որ դեռևս խեթական շրջանում այստեղ լինեին բուն հայերենով կամ նրան մերձավոր լեզուներով խոսող ցեղեր: Այս մասին կարելի է որոշ եզրակացություններ անել պահպանված հատուկ անունների հիման վրա: Այսպես, խեթական Աոնուվանդա թագավորի կնքած պայմանագրի մեջ հիշատակված է իշմերիզացի ոմն Ahiašui:

⁸³ Ինչպես հայտնի է, խեթական տեքստերում այլ լեզուներից փոխ առնված բառերը նշանակվում են երկու թեր սևապաշտ նշանով: Թեև ըստ է. Լարոշի՝ դրանք զգալի մասով լուվական ծագում ունեն, բայց հանդիպում են նաև ոչ լուվական բառեր՝ քերականական յուրահատուկ ձևերով (հմմտ. H. Kronasser, Etymologie der hethitischen, I. Wiesbaden, 1962): Հնարավոր է, որ սրանց մեջ լինեն հայասական բառեր և բառաձևեր: Հատկանշական է, որ Հ. Կրոնասերի առանձնացրած -(a)ša, -ta, -uā-, -ll ածանցները հանդիպում են նաև հայաս. հատուկ անուններում, իսկ taša-la-ta- (կահարասու նյութ. առաջ) բառի առաջին բաղադրիչը համընկնում է հայ. ամալի-ի հետ:

⁸⁴ Զ. Գրեպինը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976) մեր դրրում առանձնացված բառերից մի քանիսը բացատրում է որպես դակերենի ներդրում՝ դրանով իսկ հաստատելով մեր եզրակացությունների ճշտությունը:

այս անձնանունը գրեթե նույնությամբ համընկնում է հայ. աղուէս, սեռ. աղուեսու բառի ենթադրական այն ձևի հետ, որ պետք է միացնող օղակ լիներ հայերենի և հնդեվրոպական նախաձևի միջև (*ulōpek'u->*alōpek'u-> aluuesu-> աղուէս, սեռ. աղուեսու)⁸⁵: Խեթ. տեքստի a-ն (e-ի դիմաց) կարող էր արտացոլել e-ի նախնական բաց արտասանությունը: Նույն պայմանագրում հիշատակված է Arziuta անձնանունը, որ թերևս կապ ունի հայ. արծուի, սեռ. արծուոյ բառի հետ. այս բառն իբրև հատուկ անուն օգտագործված է նաև ավելի ուշ՝ ուրարտական տեքստերում Aršibi-ni ձևով (Մենուա թագավորի ձիու անունը). անհնար չէ ենթադրել, որ Arziuta-ն բաղկացած է Arziu- հիմքից և -ta ցուցական հոդից, որ կարող էր խեթերի կողմից ընկալվել որպես անվան մաս: Այս նույն ձևով հավանաբար Armatana տեղանունը, որ պահպանվել է հետագա Արմտան-ի մեջ (Մեծ և Փոքր Արմտաններ) և թերևս արմատով ընդհանուր է արմենների անվան հետ⁸⁶, ամենայն հավանականությամբ նույն ծագումն ունի, ինչ հայերենում պահպանված արմ||արմն, արմատ, գ-արմ բառերը (սրանք ծագում են հ.-ե. *er- «շարժ(վ)ել, հուզել, բարձրացնել» արմատից՝ *-m- կամ *-men- մասնիկներով. հմմտ. հուն. ὄρμενος «դողում, ընձուղ», ὄρμενος «ճյուղ» և այլն)⁸⁷:

Խեթական տեքստերում հիշատակված Maldiū-ն (հետագա Մալաթիան), որ ուրարտ. տեքստերում բերվում է Melite(i)a ձևով, ամենայն հավանականությամբ կապված է հ.-ե. *meli-t- «մեղր» արմատի հետ (հմմտ. հայ. մեղր, հուն. μέλι-τος, սկյութ. μέλιτος, խեթ. milit «մեղր» և այլն): Մեծուր (Մազուր) լեռան (որից Մեծուր գավառ և Մեծուր գետ) անունը (խեթ. Muzuri, հուն. Μονζουρῶν, Μονζουδον, Μονζαζαδον, արար. Mazur, թուրք. Mizur, Muzur, Munzur, Menzur) թերևս կապված է հ.-ե. *men- «ցցվել» արմատից ծագող *mnt- «լեռ» նախաձևի հետ (հմմտ. ավ. mati- «լեռան գագաթ», լատ. mons, -tis, կոռն. meneth, բրետ. menez «լեռ» և այլն):

7) Անհնար չէ հորենացու հիշատակած՝ Հայկի հաջորդների և նախարարական տների որոշ անունների մեջ տեսնել հայաստական թագավորների անունների և դիցաբանական անունների արձագանքը՝ թրակյան հատուկ անունների հետ միասին. հմմտ. Արա (փոքրասիական դիցանուն), Sarrf (փոքրասիական դիցանուն), Կաղմոս (Կարիական լեռների աստված, Թեբեի առասպելական հիմնադիր)⁸⁸, Շարա [հմմտ. խեթ. šarra- «բաժանել, պոկել. (հաց) կտրել»։ Շարան հայտնի է իր շատակերությամբ], Հայկակ, Հոյ (հմմտ. Hajas), Առնակ (հմմտ. հայաս. Arnija քաղաքանունը), Սկալուրդի (հմմտ. թրակ. Σκαλου ցեղանունը), Կոռնակ (հմմտ. հայաս. Karonni- անձնանունը):

⁸⁵ Հետաքրքրական է նշել, այս կապակցությամբ, նույն պայմանագրի՝ թերևս կենտումային հնդեվրոպական լեզվի պատկանող Lupaku-ta-ն՝ Aliyašu-ի համեմատությամբ (?):

⁸⁶ Հմմտ. Ս. Երևան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 40: Հմմտ. Armani, որ թերևս նույնն է ակկադ. աղբյուրների Arime և ուրարտ. աղբյուրների Arme երկրի հետ. տե՛ս В. Х а ч а т р я н, Восточные провинции..., էջ 104—107:

⁸⁷ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1, էջ 326—327:

⁸⁸ Կաղմոս անունը հույները հավանաբար փոխ են առել փյունիկեցիներից. փյունիկյան զգու արմատը նշանակում է «արևելք»:

8) Եթե ճիշտ է Վ. Գեորգիևի կարծիքը հտրուակերենի խեթա-լուվական ծագման մասին⁸⁹, ապա հայասա-հտրուական որոշ գուգադիպումներ լիովին հասկանալի են դառնում, և Հայասային նվիրված մեր աշխատություններում բերված փաստերը նոր լուսաբանություն ստանում: Այս դեպքում հայ-հտրուական որոշ գուգադիպումներ պետք է բացատրել որպես հայասերենի՝ հայերենի մեջ ունեցած ներդրման արդյունք:

ГИПОТЕЗА О ДРЕВНЕАНАТОЛИЙСКОМ ПРОИСХОЖДЕНИИ ХАЙАССКОГО ЯЗЫКА

Академик АН АрмССР Г. Б. ДЖАУКЯН

(Резюме)

При определении характера хайасского языка ученые выдвинули три гипотезы: по Г. А. Капанцяну, хайасский является прямой основой армянского языка; В. Бэнэциану и И. М. Дьяконов считают хайасский языком, близким к хурритскому и не имеющим родственных связей с армянским; по нашему мнению, хайасский является древнеанатолийским индоевропейским языком, выступающим в армянском как субстрат. В статье приведены дополнительные данные в пользу нашей гипотезы, уточнены отдельные факты и пересмотрены некоторые выводы. Анализ трех категорий хайасских собственных имен — антропонимов, теонимов и топонимов — приводит к следующим выводам: 1) в хайасской ономастике явно преобладают древнеанатолийские элементы, причем индоевропейское происхождение большинства из них не вызывает сомнения; 2) хайасский наиболее близок к лувийско-ликийской группе древнеанатолийских языков; 3) количество собственных имен хурритско-урартского, западнокавказского и семитского происхождения невелико, и все данные говорят об их заимствовании хайасцами; 4) имеющиеся хайасско-фракийские параллели следует объяснять частью как древние балкано-малоазийские изоглоссы, а частью как результат наличия в Хайассе или у ее границ фракийских племен; 5) хайасский язык оказал существенное влияние на армянский язык и оставил в армянской ономастике значительный след; 6) среди народов восточных окраин хеттского государства, в соседстве с хайасцами с древнейших времен жили также племена, говорящие на армянском или близких к нему языках (ср. ишмеригское личное имя Aliuasu при др.-арм. ałueš, -u «лиса»); 7) если правомерна гипотеза о древнеанатолийском происхождении этрусского языка (В. Георгиев), то многие этрусско-армянские совпадения следует отнести к фактам хайасского влияния на армянский язык.

⁸⁹ Տե՛ս. V. Georgiev, *Hethitisch und Etruskisch*, Sofia, 1962; նույնի՝ *Etruskische Sprachwissenschaft*, I—II, Sofia, 1970—1971; նույնի՝ *Etruskisch und Hethitisch*, „Linguistique balkanique“, XVII, 1, Sofia, 1974, էջ 3—40: